ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/07, 22.01.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «ԳՐԻՖ» ԱՀԻԳ ՍՊԸ

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Վերացնել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. հայտերի վերագնահատման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին մասով կայացված «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ների հայտերի վերագնահատման և դրանց բավարար ճանաչման մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

<<ԳՐԻՖ>> ԱՀԻԳ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ք. Երևան, Կոմիտասի 7/1բ, բն29 հեռ. 010 56-54-67

բջջ. 099 44-02-02

N 03

«22» 01 2019թ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Կից Ձեզ եմ ներկայացնում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի թիվ 50 հոդվածով սահմանված կարգով բողոքը՝ <<Բարձրավոլտ էլեկտրացանցեր>> ՓԲԸ կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/57 ծածկագրով գնանշման հարցի վերաբերյալ:

Ներկայացնում եմ նաև բողոքարկման վճարի անդորրագրի պատճենը, բոքոքը բավարարելու դեպքում բողոքարկման վճարը հետ վերադարձնելու համար ընկերության բանկային վավերապայմանները / հ /հ՝ 22317000169500, Բանկ՝ ,,Արցախ Բանկ,, Նաիրիի մ/ճ/, ինչպես նաև տնօրենի անձնագրի և արձանագրությունների պատճենները:

Առդիր 14 թերթ

Գործադիր տնօրեն՝ *Է.Ս.Սիմոնյան*

22571-9
22.01.2019թ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Ք.Երևան, Կորյունի փող. 7/1, բն. 29
հեռ. 099 440 202
Էլ. հասցե՝ grif.ahig@yandex.com
Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ջ.Անդրանիկի 1 փող.
հեռ: 060 72-00-13
էլ.փոստ՝ procurment@hven.am

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցում

Բ Ո Ղ Ո Ք

Բողոքի նախապատմությունը և փաստերը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցել են թվով 6 կազմակերպություններ, այդ թվում «Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ-ն:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ.նիստի թիվ 2 արձանագրությամբ «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ների հայտերի հավելված 4-երում տեղ գտած սխալների և անճշտությունների պատճառով հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34 րդ հոդվածի 1 ին մասի պահանջները վերջիններիս հայտերը գնահետել է անբավարար և մերժել է:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ նիստի թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրությունը (խորհրդատվական բնույթ կրող) որոշել է վերագնահատել «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոտեկտ Գարդինգ» ՍՊԸ-ների հայտերը և դրանք ճանաչել է բավարար:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի, եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն հրավերի 7.2 կետի, բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հրավերի 5□1, 5□2 և 5□3 կետերով սահմանվում են հայտի գնային առաջարկի կազման, գնահատման և ներկայացման որոշ պահանջներ և առանձնահատկություններ:

Հրավերով գնային առաջարկին ներկայացվող պահանջները սահմանված են հրավերի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև հրավերի հավելված 4-ով սահմանված գնային առաջարկի ձևանմուշով:

Հայտի գնային առաջարկի ձևը և առաջարկին ներկայացվող պահանջները (ներկայացվող տեղեկատվությունը և տվյալները) սահմանված են հրավերի Հավելված 4-ով:

«Մեքյուրիթի Գրուպ» ՍՊԸ-ի, «Սայգա» պահնորդային ՍՊԸ-ի և «Յունիպրոեկտ Գարդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները չեն համապատասխանել հրավերով սահմանված գնային առաջարկի պայմաններին և կազման պահանջներին, իսկ վերը նշված օրենքով, կարգով և հրավերով վերջիններիս ներկայացրած գնային առաջարկների անհամապատասխանությունների և սխալների մասով գնահատման (բավարար գնահատման) առանձնահատկություններ սահմանված չեն:

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 խորհրդատվական բնույթ կրող գրությամբ ներկայացված այն տեսակետը, որ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իր անվանումով բացված կայք-էջով, մասնակցի հայտի ներկայացումը (որտեղ նշված է նաև ՀԿՀՀ-ն) հիմք է, որպեսզի մասնակցի հայտի գնային առաջարկում սխալ լրացված կամ մի գուցե չլրացված անվանման պատճառով մասնակցի հայտը չմերժվի, չունի որևէ օրենսդրական կամ նորմատիվ հիմնավորում և կարգավորում, այն չի հիմնավորում և ապահովում գնային առաջարկ փաստաթղթի իրավական համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանվածնորմերի պահանջներին:

Նմանապես՝ գնային առաջարկի էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված լինելու հանգամանքը չի կարող գերակայել օրենքով, կարգով և հրավերով հրավերի փաստաթղթերին ներկայացված պահանջների պահպանման նկատմամբ:

Այն պնդումները, որ սխալները և անհամապատասխանությունները գնային առաջարկներում տեղ են գտել թյուրիմացաբար կամ այլ պատճառներով (նորմատիվ

կարգավորումներ չունեցող). չեն կարող ներկայված փաստաթղթերին ապահովել օրինականություն և օրենքի, կարգի և դրավերի նորմերին համապատասխանություն: Նույն տրամաբանությամբ կարելի է ճշտել և սրբագրել ցանկացած թյուրիմացաբար կամ անփույթությամբ կամ էլ այլևայլ դիտավորություններով սխալ լրացված փաստաթուղթ:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Վերացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ ԳՀԾՁԲ-18/57» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 21.01.2019թ. հայտերի վերագնահատման նիստի թիվ 3 արձանագրության 1-ին մասով կայացված «Սեքյուրիթի Գրուպ», «Սայգա» պահնորդային և «Յունիպրոեկտ Գարդինգ» ՍՊԸ-ների հայտերի վերագանահատման և դրանց բավարար ճանաչման որոշումը:

Կից ներկայացնում եմ ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2019թ. թիվ 1/26-1381-19 գրության պատճենը:

Առդիր՝ 14 թերթ:

Հարգանքով՝

«Գրիֆ» ԱՀԻԳ ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Է. Սիմոնյան

22.01.2019թ.